ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ ստացվել են շնորհավորական բազում հեռագրեր և ողջույնի ջերմ խոսքեր՝ գնահատանքի արտահայտություններով և նրա ապագա գործունեության սրտագին բարեմաղթություններով:

Այս կապակցությամբ հրատարակում ենք վերոհիշյալ ողջույնի խոսքերից մի քանիսը:

Ջերմ շնորհակալություն բոլորին:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակին առիթով կուղարկենք մեր ողջույնի խոսքը՝ գնահատելով անոր կրոնա-բարոյական, պատմա-բանասիրական մեծ դերը:

Թող լույս իջնե ամսագրի հիմնադիր Գևորգ Զ կաթողիկոսի հոգվույն և երկար պահե Աստված արևը Ջերդ Սուրբ Օծության, որ ամսագիրը հասցուց իր այսօրվան բարձր մակարդակին:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակի առիթով խմբագրության կմաղթենք երկար տարիներ՝ շարունակելու եկեղեցական-մշակութային իր կարևոր ծառայությունը մեր եկեղեցիին և մեր ժողովուրդին: